

ԺԱ. տարի / Թիւ 1469
Գ ի ն ը ` 2 €

11^e année / N° 1469
Prix unitaire : 2 €

ՄԵՅԱՌԱՔ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՆԻԿՈՂ ՓԱՇԻՆԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԱԾ Է ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐԱԳՈՅՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Վարչապետ Փաշինեան հակահամաճարակային քաղաքականութեան կարևորագոյն խնդիրներէն կը համարէ՝ Հայաստանի տնտեսական և ընկերա-տնտեսական ոլորտներուն հնարաւոր չափով լաւ վիճակի մէջ գտնուիլը: «Արմէնփրէս»-ի համաձայն՝ այս մասին Փաշինեան յայտնած է Յունիս 8-ին պարէտատան նիստին յաջորդած ասուլիսին:

“Մեր հակահամաճարակային քաղաքականութեան սկզբունքներից է այն, որ կայացնում ենք այնպիսի որոշումներ, որոնք բխում են ՀՀ-ի անվտանգութեան, տնտեսութեան, առողջապահական շահերից: Մեր խնդիրը ոչ միայն յաղթահարելն է այս հակահամաճարակային իրավիճակը, այլև այդ յաղթահարման պահին Հայաստանի տնտեսական, սոցիալ-տնտեսական ոլորտները առաւել լաւ վիճակում տեսնելն է: Ուզում եմ ընդգծել, որ այս գործընթացում, բացի ընթացիկ սոցիալ-տնտեսական խնդիրներից, մենք դնում ենք նաև քաղաքակրթական խնդիրներ”, նշած է Փաշինեան ու աւելցուցած, թէ այդ խնդիրներէն են՝ կարգի սպասելու մշակոյթը, ինչպէս նաև օրէնքի, կարգի, համակեցութեան կանոններու, ուրիշներու իրաւունքներու նկատմամբ վերաբերումի փոփոխութիւնը:




Այս առումով, ՀՀ վարչապետը վստահեցուցած է, թէ պետութիւնը կ'ընթանայ ճիշդ ճամբով: Ան նշած է, թէ հակահամաճարակային կանոններու պահպանման կոչերը հանրութեան կողմէ պէտք է ա'լ աւելի լսելի դառնան: Վարչապետը մեծ գոհունակութեամբ ընդգծած է, որ հակահամաճարակային շարժում սկսելու իրենց կոչերը նոյնպէս որոշակի արձագանգ ստացած են:

“Յոյս ունեմ, որ կը ձևաւորուեն կամաւորների առաւելագոյնը 2 հոգանոց խմբեր, ովքեր հակահամաճարակային կանոնները պահպանելով՝ մեր միս քաղաքացիներին կ'իրազեկեն դրանք պահպանելու մասին: Նրանք կը մտնեն տարբեր բակեր, փողոցներ, շուկաներ և մեր քաղաքացիներին, առանց որևէ կոնֆլիկտային իրավիճակ հրահրելու, առանց յանդիմանելու կը յորդորեն պահել կանոնները”, նշած է ՀՀ վարչապետը: ■

ՕՆԻԿ ԳԱՍԿԱՐԵԱՆ ԿԸ ՆՇԱՆԱԿՈՒԻ ԶՈՒ ԳՇ ՊԵՏ, ԱՐԳԻՇՏԻ ՔԵԱՐԱՄԵԱՆ՝ ԱԱԾ-Ի ՏՆՕՐԷՆ, ՎԱՀԷ ՂԱԶԱՐԵԱՆ՝ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏ

Վարչապետ Փաշինեան Յունիս 8-ին յայտարարած է, թէ պաշտօնանկ կ'ըլլան Սպայակոյտի պետ Արտակ Դաւթեան, ԱԱԾ-ի տնօրէն Էդուարդ Մարտիրոսեան և ոստիկանապետ Արման Սարգսեան:

Պարէտատան նիստէն ետք տեղի ունեցած ասուլիսին Փաշինեան անդրադառնալով այս պաշտօնանկութեանց, յայտարարած է. “Ես ցաւում եմ նման զարգացման համար, բայց, կարծում եմ, որ այս իրավիճակում մեր երկրի անվտանգութեան շահը, պետական



Օնիկ Գասպարեան (ձախից), Արգիշտի Քեարամեան (աջից՝ վերը) և Վահէ Ղազարեան (Շաբ. էջ 3)

ՆՄԱԲԱԳՐԱԿԱՆ

ԿԱՅՈՒՆԱՅՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Մէկ օրուան մէջ Հայաստանի ուժային երեք կառույցներու պետերը փոխարինուեցան: Փոփոխութիւնները տեղի ունեցան պսակաձեւ ժափրի դէմ Փաշինեանի կառավարութեան որդեգրած քաղաքականութեան անարդիւնաւէտութեան պայմաններուն մէջ, բայց նաեւ՝ նախկին վարչակարգին հետ համախոհ խորհրդարանական եւ արտախորհրդարանական ընդդիմադիր կարգ մը ուժերու կողմէ կառավարութեան հրաժարականի պահանջի ենթախորհրդի վրայ: Անկասկած այս փոփոխութիւններով Փաշինեան կը պատասխանէ կառավարութեան հրաժարականը պահանջողներուն: Վստահաբար, ոստիկանապետին հրաժարականը ուղղակի կապ ունէր հանրային տարածքին մէջ համաճարակի տարածման նախազգուշական միջոցները խստօրէն չկիրարկող ոստիկանութեան անարդիւնաւէտ աշխատանքին հետ:

Ազգային անվտանգութեան ծառայութեան (ԱԱԾ) պետի փոփոխութիւնը երկար ժամանակէ ի վեր նախատեսուած ծրագիր էր, որուն համար 29-ամեայ Արգիշտի Քեարամեան գրեթէ մէկ ամսուան մէջ Պետական վերահսկողական ծառայութեան ղեկավարի տեղակալի պաշտօնէն անցաւ ԱԱԾ-ի տնօրէնի տեղակալ եւ հիմա՝ ԱԱԾ-ի պետ: Հայաստանի նման սովետական անցեալ ունեցող եւ ռազմական ու տնտեսական գետնի վրայ Ռուսաստանին ենթակայ երկրի մը համար Ազգային ապահովութեան ծառայութեան գլխուն վստահելի պաշտօնեայի մը նշանակումը պետական համակարգը կայուն պահելու կարևորագոյն երաշխիքներէն է: Մա՛նաւանդ երբ վարչապետը անձնապէս կը խոստովանի որ պետական պաշտօնէութեան շօշափելի մասը կ'աշխատի կառավարութեան դէմ: Դատական համակարգին հետ իրաւապահ մարմինները եւս բարեփոխումի խիստ կարիքը ունին:

Ամէնէն անսպասելի Ձինուած ուժերու գլխաւոր շտապի, այսինքն՝ բանակի հրամանատար՝ Արտակ Դաւթեանի պաշտօնանկութիւնն էր, որուն գլխաւոր դրոշմապատճառը անոր զակիկ ամուսնութիւնն էր, որ տեղի ունեցած էր պսակաձեւ ժափրի դէմ պայքարի կառավարութեան հրապարակած կանխարգիլման կանոններու անտեսումով: Կայ

նաեւ հանրութեան մէջ շրջող այլ տեղեկութիւն մը՝ իբր թէ զօրավար Դաւթեանին պատկանող ապարանքը անոր ունեւորութեան յայտարարագրին մէջ չէ արձանագրուած:

Պսակաձեւ ժափրին դէմ պայքարելու անհրաժեշտութեան դիմաց՝ կառավարութեան հրաժարականի պահանջը քաղաքականապէս պետութիւնը կաթուածահար ընելու քայլ է, քանի դեռ չկայ ընդդիմադիր ուժերը համախմբող կեդրոնական քաղաքական ուժ մը որ ունենայ նաեւ ժողովուրդին նեցուկը: Կայ նաեւ արտաքին ուժերու ճնշումը՝ ազէրա-թրքական ռազմափորձերը, ռուսական կազմի գինի թանկացումին ստեղծած տնտեսական մեծ բեռը: Այս բոլորը ցոյց կու տան Փաշինեանի կառավարութեան դէմ համակարգուած յարձակումի տրամադրութիւն՝ ներքին եւ արտաքին ուժերու կողմէ: Ասոր դիմաց, վարչապետը ուժային կառույցներու մէջ պաշտօնական փոփոխութիւններով՝ պետական համակարգի անվտանգութիւնը ապահովելու կողքին, կ'ուզէ նաեւ ձեռք ձգել այն անսակարկ հաւատարմութիւնը, որ իրեն թոյլ պիտի տայ անխափան կիրարկել վերջին շրջանին Ազգային ժողովի քուէարկած՝ անօրէն կերպով ձեռք բերուած գոյքերու ունեւորումի օրէնքը:

2016-ի Ապրիլեան պատերազմի ուսումնասիրութեան խորհրդարանական յանձնախումբի աշխատանքներուն ասարտը եւս լարուածութիւն ստեղծող ազդակ է: Առաջին անգամ ըլլալով պետական յանձնաժողով մը կազմուած՝ ընդդիմադիր եւ մեծամասնական խորհրդարանականներէ, իր գեկոյցը պիտի յանձնէ ռազմական էական նշանակութիւն ունեցող Արցախեան պատերազմին մութ մնացած պարագաներուն մասին, որ Հայոց բանակին պատճառեց հարիւրաւոր զոհեր եւ հարիւրաւոր հեկտար հողի կորուստի պատճառ դարձաւ:


Բարեբախտաբար համաճարակին ստեղծած տնտեսական դժուարին պայմաններուն մէջ, ինչպէս նաեւ անոր դէմ պայքարելու ընկերային գիտակցութեան պակասին կողքին, Արցախի կառավարութեան հետ համերաշխ գործակցութիւնը կը մնայ ներքին լարուածութիւնը նուազեցնող կարևորագոյն ազդակ:

ԹՈՒՐԹԻԱ

ԱՅՍԱ ՍՈՑԻԱԼԻ ՀԱՐՑՈՎ ԿՈՉ ՈՒՂՂՈՒԱԾ Է ԻՒՆԷՄՔՕ-ԻՆ

«ՓՐԿԵԼ ԱՅՍԱ ՍՈՑԻԱԼՆ ԵՒ ԶԹՈՂՈՒԿ ՈՐ ՄՉԿԻԹԻ ՎԵՐԱԾՈՒԻ»

«Մարմարա».- Նախագահ էրտողանի հրահանգով գործընթաց մը սկսած է Այա Սոֆիա պատմական տաճարը մզկիթի վերածելու համար: Այա Սոֆիան, որ անփոխարինելի սրբավայր մըն է Յունաց ուղղափառ եկեղեցուց համար եւ համաշխարհային քրիստոնէութեան ժառանգութեան կարեւոր ուխտատեղիներէն մէկը կը հանդիսանայ, 1936-ին վերածուած էր թանգարանի: Տաճարը ունի համաշխարհային մշակութային ժառանգութեան կարգավիճակ, ուստի կարգ մը կառույցներ ստորագրահաւաքի արշաւ սկսած են ու կը պահանջեն որ ԻՒՆԷՍԿՕ քայլեր առնէ Թուրքիոյ դէմ:



Կուրք կարեւոր է անով որ ստորագրահաւաքի արշաւին մասնակցողներուն մէջ են ամերիկահայ կառույցներ եւս, որոնք իրենց ձայնը միացուցած են յունական կազմակերպութիւններուն: Յունաստանի Արտաքին գործոց նախարարութիւնը յայտարարեց, որ Թուրքիոյ իշխանութիւններու այս քայլը անարգանք է միջազգային հանրութեան դէմ, պահանջեց որ ԻՒՆԷՍԿՕ, որու անդամ է նաեւ Թուրքիա, իր խօսքը ըսէ ու այսպիսի որոշումէ ետ պահէ զայն: ■

ԹՈՒՐԹԻԱ

ԳԱՆՁԱԵՈՅԶԵՐ ԿՐ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ՔԱՆԴԵԼ ՎԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ Ս. ԿՈՅՍԵՐ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՄՆԱՑՈՐԴԱՅԸ

Վանի Կիրփընար շրջանի Աքպոյու թաղամասին մէջ կը գտնուի հայկական Ս. Կոյսեր (Մէնթ Մարինոս) մենաստանը, որ կը շարունակէ աւերածութիւններու ենթարկուիլ բնական աղէտներու ու գանձագողերու յարձակումներու հետեւանքով:



Վանի «Երեզլինճի Երլ» համալսարանի դասախօս Մէհմէտ Թօփի համաձայն՝ վանական համալիրը յատկապէս լուրջ վնասներ կրած է 1648-ի Վանի երկրաշարժէն: Թուրք դասախօսին վկայութեամբ՝ այս համալիրը Վանի քրիստոնէական ու յատկապէս հայկական ճարտարապետութեան բազմաթիւ օրինակներէն մէկն է: Իր գոյութեան ընթացքին կառուցը ծառայած է մեծ մասամբ որպէս կուսանոց, ուրկէ ծագած է վանական համալիրին անունը:

Յայտնի է, որ մինչեւ 1915-ի դէպքերը, այսինքն մինչեւ որ մենաստանը վերջնապէս լքուի բախտի քմահաճոյքին՝ համալիրին մէջ կ'ապրէին 200-300 կոյսեր:

Մենաստանի տեղը այնպէս մը ընտրուած էր, որ անմիջապէս շրջակայքը բնակավայրեր չըլլային: Համալիրը կառուցուած էր երկու ձորերու միջեւ, հարթավայրին նայող բլուրի լանջին: Ներկայիս ան կը գտնուի Վանի Կիրփընար շրջանէն 7 քիլոմէթր հեռավորութեան վրայ:

Եկեղեցիէն մնացած կիսաւեր գմբէթն ու պատերը, որոնք գլխաւորաբար կառուցուած են կաւէ աղիւսէ, թոյլ կու տան պատկերացում մը կազմել վանական համալիրին ներսը եկեղեցուց եւ օժանդակ քանի մը կառույցներու գտնուելու վայրերուն մասին: ■

ԻՐԱՆ

ԲՈՂՈՔԻ ՅՈՅՅ՝ ԹԵՀՐԱՆԻ ՄԷՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊՈԱՆԱՏԱՆ ԴԻՄԱՅ

Թեհրանի «Արաքս» շաբաթաթերթը Յունիս 9-ին կը տեղեկացնէր, թէ նոյն օրը խումբ մը ցուցարարներ որոնք հաւաքուած են Թեհրանի մէջ Հայաստանի դեսպանատան դիմաց՝ հրկիզելով Իսրայէլի դրօշը՝ ՀՀ-էն պահանջած են խզել այդ երկրին հետ դիւանագիտական յարաբերութիւնները:



Երեւան նախապէս յստակացուցած էր Թեհրանին, որ Հայաստան երրորդ երկիրներու հետ իր յարաբերութիւնները կը ճշդէ կլլելով իր ազգային շահերէն, եւ միաժամանակ ընդգծած՝ որ ՀՀ յարաբերութիւնները այլ երկիրներու հետ երբեք չեն կրնար բացասական ազդեցութիւն ունենալ Հայաստան-Իրան բարեկամական յարաբերութիւններուն վրայ: ■

ՀԱՅԱՍՏԱՆ - ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՋ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՅԱՂԹԱՆԱԿԻ ԶՕՐԱՀԱՆԴԵՍԻՆ

Վարչապետ Փաշինեան Մոսկուա պիտի մեկնի՝ Յունիս 24-ին ներկայ գտնուելու Հայրենական մեծ պատերազմի յաղթանակի 75-ամեակին նուիրուած զօրահանդէսին: «Արմէնփրէս»-ի համաձայն այս մասին տեղեկացուցած է ՀՀ վարչապետի մամուլի բանբեր Մանէ Գէորգեան:

Պսակաձեւ ժահրի պատճառով յաղթանակի 75-ամեակին նուիրուած զօրահանդէսը Մայիս 9-ին տեղի չունեցաւ եւ յետաձգուեցաւ Յունիս 24-ին:

Յաղթանակի շքերթին Հայաստանէն պիտի մասնակցի 75 հոգիէ բաղկացած շարասիւն մը: Անոնք պիտի ծածանեն Թամանեան զօրաբաժնի մարտական եւ ՀՀ դրօշները: ■

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԽՈՒՄԲ ՄԸ ՎԻՐԱՀԱՅԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՆՈՒԻՐԱԾ ԵՆ 27 ՇՆՉԱՌԱԿԱՆ ՍԱՐՔ

Պսակաձեւ ժահրին դէմ պայքարի ծիրին մէջ Վրաստան բնակող խումբ մը Հայեր Հայաստանին նուիրած են 27 շնչառական սարք:



Վրաստանի մէջ ՀՀ դեսպանութիւնը կազմակերպած է շնչառական սարքերու Հայաստան փոխադրութիւնը:

ՀՀ Առողջապահութեան նախարար Արսէն Թորոսեան այս կապակցութեամբ գրած է Դիմագիրքի իր պաշտօնական էջին վրայ եւ շնորհակալութիւն յայտնած Վրաստանի մեր հայրենակիցներուն: «Իրօք, այս սարքերով մեր հիւանդները շնչում են՝ բառի բուն եւ փոխաբերական իմաստներով», ընդգծած է ան: ■

NOR HARATCH

Journal trihebdomadaire en langue arménienne
Journal édité par SARL NorH Publications – 3, rue Charrier, 94000 Créteil
Adresse établissement secondaire : NorH Publications – 83, rue d'Hauteville - 75010 Paris
contact@norharatch.com / abonnement@norharatch.com
Directeur de publication : Aram Kerovpian
CPPAP : 1120 | 90193 / ISSN : 2105-7672
Imprimé et distribué par Euclès Daily – 24, rue Turgot, 75009 Paris
Prix d'Abonnement annuel (France): 250 € / Prix d'Abonnement annuel (Hors France): 300 €
Pour les virements bancaires :
SOCIÉTÉ GÉNÉRALE – Agence Paris St Vincent de Paul (03320)
IBAN - FR76 3000 3033 2000 0206 9946 930 / BIC - SOGEFRPP

ՌԻՔՐԱԽԱ

ՄԱՀԱՅԱԾ Է ՓԱՐԱՃԱՆՈՎԻ ԱՅՐԻՆ

Հայաստանի Հանրային ձայնասփիւռը Յունիս 6-ին հաղորդած է, թէ Քիւեի մէջ 82 տարեկանին մահացած է Փարաճանովի այրին՝ Սվեթլանա Շերպաթիուք-Փարաճանով: Ան բանասէր էր եւ վերջին տարիներուն իր տղուն՝ Սուրէն Փարաճանովի հետ կ'ապրէր Քիւեի կեդրոնը: ■



ՊՍԱԿԱԶԵԻ ԺԱՀՐԸ ԵՒ ԿԻԼՊԷՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ԼԵԶՈՒԱՅԻՆ ՆՈՐԱՐԱՐ ԾՐԱԳՐԵՐՈՒ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Պսակաձեւ ժահրը պարտադրեց ինքնամեկուսացումը տուներէն ներս, ընկերային եւ աշխատանքային հանդիպումներու բացառումը: Արհեստագիտութեամբ յագեցած համացանցային հաղորդակցութեան բոլոր հնարաւորութիւնները գործածուեցան մարդկային շփումները հեռակապ միջոցներով ապահովելու համար:

«Նոր Յառաջ»-ի էջերուն մէջ քանի մը անգամ անդրադարձանք հայերէն լեզուի զարգացման միտող գրական եւ մշակութային բովանդակութեամբ նորարար փորձարկումներու եւ կայքերու:

Թուային եւ արհեստագիտական հայերէնի

կալուածէն ներս՝ Կիլպէնկեան հիմնարկութիւնը աւելի քան հինգ տարի է լրջագոյն աշխատանք կը տանի, – կրթութեան, մանկավարժութեան, թարգմանական գրականութեան, ընկերաբանական ուսումնասիրութիւններու, համագումարներու, տեսանիւթերու, լեզուական ծրագրերու, ինչպէս՝ ուղղագրիչ, բառարան, փոխադրիչ... – արհեստագիտութեամբ եւ արհեստավարժութեամբ մօտենալու այս մարզերուն:

Մեկուսացման շրջանը աւելի ընդգծեց այս լեզուական ծրագրերու անհրաժեշտութիւնը: Աւելի մանրամասնօրէն ծանօթանալու համար տարուած աշխատանքներուն, ստորեւ

կը ներկայացնենք քառաձայն հարցազրոյց մը Կիլպէնկեան հիմնարկութեան Հայկական բաժանմունքի կրթական բաժնի ծրագրերու պատասխանատուներուն հետ, որոնցմէ իւրաքանչիւրը՝ Անի Կարմիրեան, Ծողեր Մարկոսեան եւ Գայիանէ Մաժունեան, իրեն վերապահուած յատուկ ծրագրին պատասխանատուութեան սահմանին մէջ կը ներկայացնէ տարուած աշխատանքները, ձեռք բերուած արդիւնքները եւ հետապնդուած նպատակները: Կը սկսինք Բաժանմունքի տնօրէնին՝ Ռազմիկ Փանոսեանի հետ, աւելի ընդհանուր նիւթերու մասին խօսակցութեամբ մը:

ՕՆԻԿ ԳԱՍՊԱՐԵԱՆ ԿԸ ՆՇԱՆԱԿՈՒԹԻ ԶՈՒ ԳՇ ՊԵՏ...

(Շար. Ա. Էջէն)

կառավարման որակի եւ կարգապահութեան շահը պահանջում էր կայացնել այսպիսի որոշումներ: ... Պետական կառավարման բոլոր մարմինները պէտք է սեփական օրինակով ի ցոյց դնեն ծայր աստիճան եւ անվերապահ կարգապահութիւն»:

ՀՀ վարչապետը յաջորդ օր՝ Յունիս 9-ին նոր նշանակումներ կատարելու որոշում կայացուցած է: Փաշինեան այս մասին գրառում կատարած է Դիմագիրքի իր էջին:

«Սիրելի հայրենակիցներ, մի շարք կարեւոր որոշումներ եմ կայացրել: Ըստ այդմ՝

Գեներել-լեյտենանտ Օճիկ Գասպարեանը նշանակուած է ԶՈւ Գլխաւոր շտաբի (Սպայակոյտի - «ՆՅ») պետ:

Գնդապետ Արգիշտի Քեարամեանը նշանակուած է ԱԱԾ տնօրէն:

Գնդապետ Վահէ Ղազարեանը նշանակուած է Ոստիկանութեան պետ:

Գեներալ-լեյտենանտ Արտակ Դաւթեանին, գնդապետ Էդուարդ Մարտիրոսեանին, գնդապետ Արման Սարգսեանին շնորհակալութիւն եմ յայտնում այս ընթացքում կատարած աշխատանքի եւ ներդրած ջանքերի համար», գրած է Փաշինեան:

Հանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեան արդէն ստորագրած է համապատասխան հրամանագրերը: ■

ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿԵԱՆ. “ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՈՉ ԹԷ 97, ԱՅՂ 100 ԱՌ 100-Ը ՊԷՏՔ Է ՓՈՒՈՒԻ”

Յունիս 5-ին տեղի ունեցած է Բարգաւաճ Հայաստան կուսակցութեան (ԲՀԿ) քաղաքական խորհուրդի հրատապ նիստը, զոր վարած է կուսակցութեան նախագահ Գագիկ Ծառուկեան:

Իր ելույթին սկիզբը Ծառուկեան նշած է, որ երկրին մէջ ստեղծուած իրավիճակը պարտադրած է այսօր հանդէս գալ սթափ գնահատականներով եւ ներկայացնել ելքեր ժողովուրդին առջեւ ծառայած խնդիրներու լուծման վերաբերեալ:



«Կառավարութեանը հնարաւորութիւն էր տրուած, լիարժէք ժամանակ, որ իրենք կարողանային ժողովրդի սպասելիքներն իրականացնել, իրենց խոստումները, որ տուել էին ժողովրդին, եւ ինչի հիման վրայ իրենք իշխանութիւն դարձան: Մենք նույնպէս աջակից ենք եղել այդ փոփոխութիւններին, որ կարողանանք դա իրականութիւն դարձնել եւ, իհարկէ, հնարաւորութիւն կար ժողովրդի սպասելիքն իրականութիւն դարձնել: Բայց երբ ստեղծուեց իրենց կառուցուածքը, ծրագիրը, կազմը, եւ ասացի, որ այդ կազմով հնարաւոր չէ այս խոստումներն ու սպասելիքներն իրականացնել: Հիմնական խնդիրն այն է, որ այդ կազմի մէջ կան մարդիկ, պատասխանատուներ, կառավարիչներ, որ իրական կեանքում քարոքարին չեն դրել, ոչ մի ոլորտ չեն ղեկավարել, կայ փորձի պակաս, եւ դա հասկանալի էր, որ դա իրականութիւն չէր դառնայ», նշած է Ծառուկեան: Ան յիշեցուցած է, որ դեռ մէկ-մէկուկէս տարի առաջ ըսած էր, որ ժողովուրդը փորձադաշտ չէ, պետութիւնը փորձադաշտ չէ, ուրեմն՝ պէտք է ըլլան փոր-

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

ԱԶԱՏՈՒՀԻ ՍԻՄՈՆԵԱՆ՝ ՍՓԻՒՌԻ ՀԱՐՅԵՐՈՒ ԱՐՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԽՈՐՀՐԳԱԿԱՆ

Ազատուհի Սիմոնեան Յունիս 8-ին նշանակուած է Սփիւրքի հարցերու Արցախի նախագահի խորհրդակալ:



Ան ծնած է 1991-ին Սպահանի (Իրան) հայկական Նոր Զուղա համայնքին մէջ: 2003-ին, իր ընտանիքին հետ հաստատուած է Հայաստան: 2014-ին աւարտած է ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի Քաղաքագիտութեան բաժինը, քաղաքական կառավարման եւ քաղաքական վերլուծութեան մասնագիտութեամբ:

Այնուհետեւ եղած է ՀՀ ԱԺ-ի երեսփոխանի օգնական, «Օգնիր եղբորդ» բարեսիրական հիմնադրամի գրասենեակի վարչական պատասխանատու, Արցախի Հանրապետութեան կառավարութեան աշխատակազմին մէջ՝ փոխվարչապետի իրաւական հարցերու խորհրդակալ, Արցախի Հանրապետութեան նախագահի աշխատակազմի իրաւական հարցերու խորհրդակալ, 2016-էն ցայսօր՝ ՀՀ Տարածքային կառավարման եւ զարգացման, ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարութիւններուն կից՝ հասարակական խորհուրդի անդամ (ԱՀ կառավարութեան ներկայացուցիչ):

Ան նաեւ Հայաստանի եւ Արցախի մէջ գործող հասարակական շարք մը կազմակերպութիւններու հիմնադիր անդամ է:

Ամուսնացած է, ունի աղջիկ մը: ■

ձառու, արհեստավարժ, արդիւնք ցոյց տուած մարդիկ, եւ «կապ չունի կուսակցական պատկանելութիւնը կամ իրար հետ քայլելու խնդիր չկայ»: “Ես այն ժամանակ ասել եմ, որ անհնար է այդ սպասումներն իրականացնել, եւ որ պէտք է 97 տոկոսին փոխել: Այսօր տեսնելով այս ծախողումները՝ լիարժէք կարող եմ ասել՝ ոչ թէ 97, այլ 100 տոկոսը պէտք է փոխուի, որովհետեւ բոլոր ոլորտները ձախողուած են”, ըսած է ԲՀԿ-ի ղեկավարը:

Ծառուկեան համախմբուելու կոչ ուղղած է Հայաստանի, Սփիւրքի եւ Արցախի բոլոր առողջ քաղաքական ուժերուն: ■

ՄԱՆՈՒԷԼ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ՎԻՃԱԿԸ ԾԱՅՐ ԱՍՏԻՃԱՆ ԾԱՆՐ Է

Ազգային ժողովի նախկին երեսփոխան, զօր. Մանուէլ Գրիգորեան «Նայիրի» բժշկական կեդրոնի վերակենդանացման բաժանմունք փոխադրուած է:

“Գիտակցութեան կորուստ է ունեցել, հիմա գտնուում է «Նայիրի» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքում: Վիճակը ծայրայեղ ծանր է”, ըսած է անոր փաստաբանը՝ Արսէն Մկրտչեան:

Մանուէլ Գրիգորեան 2018 Յունիս 16-ին ձերբակալուած էր, ապա՝ Յունիս 19-ին Ազգային ժողովի քուէարկութեամբ զրկուած էր երեսփոխանական անձեռնմխելիութենէն ու դատարանի որոշումով բանտարկուած էր:

Անոր դէմ յարուցուած մեղադրանքներն էին ապօրինի կերպով ռազմամթերք ձեռք ձգել եւ գայն պահել, ինչպէս նաեւ իրեն վստահուած՝ ուրիշին պատկանող գոյք իւրացնել, յափշտակել: ■

չունի դպրոցի մը յաջողութեան հետ: Որպէս համայնք կ'ողբանք որ ծնողներ իրենց զաւակները հայկական դպրոց չեն դրկեր,— ուր որ գոյութիւն ունին,— բայց քաջութիւնը չունինք հարցադրելու թէ ինչո՞ւ: Ատոր պատասխանը որոշ ձախողութիւններու հետեւանքն է այլազան մակարդակներու վրայ, ղեկավարութենէ մինչեւ մանկավարժական ըմբռնում:

Սփիւռքը պէտք է ստանձնէ իր հարցերը լուծելու ղեկավարի պատասխանատուութիւնը: Արեւմտահայերէնը Սփիւռքի հարցն է եւ Սփիւռքն է, որ պէտք է լուծէ իր հարցերը, իր ղեկավար դասակարգի առաջնորդութեամբ: Կիւլպէնկեան հիմնարկութիւնը իր միջոցներով եւ կարելիութեան սահմաններուն մէջ այս աշխատանքին մէկ բաժինը կ'իրագործէ, բայց Սփիւռքի մէջ մեր Բաժանմունքին շատ աւելի մեծ կազմակերպութիւններ կան:

Ի դէպ, Հայաստանի մէջ արհեստագիտութեան զարգացման շատ յստակ տեսլական մը գոյութիւն ունի երկրին ղեկավարութեան մօտ, բայց ան ոչ թէ լեզուի, այլ տնտեսութեան բարգաւաճման առնչուած է, ինչ որ շատ հասկնալի է:

«ՆՅ» - Ճիշդ է որ Սփիւռքը աղքատ չէ, բայց ցարդ այդ տեսլականը չէ ունեցած: Ան նաեւ կառավարման այլ եղանակով մը շեշտը ազգային այլ խնդիրներու վրայ դրած է, այդ ձեւով ալ աղքատացնելով Արեւմտահայութեան մշակութային ժառանգութիւնը, որուն անբաժան մասնիկն է լեզուն: Ընդհանրապէս, հայերէնի պարագային, կ'անդրադառնանք, ի վերջոյ, որ արհեստագիտութեան կալուածէն ներս, հայերէնով կրթական ծրագրեր, լեզուագիտական դաստիարակչական խաղեր, գիտական բնօրինակ տեսանկյուններ մշակելու 20-30 տարուան բաց մը կայ: Այս ուղղութեամբ ի՞նչ լուծում կ'առաջարկէք:

Ռ.Փ. - Շիտակ է, որ Սփիւռքի կրթական մարզին մէջ հակայական բաց մը կայ: Սփիւռքի մէջ հայկական ինքնութիւն եւ լեզու պահելը իրապէս շատ պահպանողական ընթացք առած է եւ այժմ է վտանգաւորը: Պահպանողական այն իմաստով որ ինչ որ ունինք սառեցնենք որպէսզի չկորսնցնենք: Այսպէսով նորը ստեղծելու բաւարար առիթ չենք տուած երիտասարդներուն: Պատմական օրինակ մը տամ՝ 1920-ական թուականներուն տեղի ունեցածը այս երեւոյթին հակապատկերն էր. դաշնակցական, հնչակեան եւ ռամկավար շրջանակներուն մէջ սփիւռքացած եւ հայախօս ժողովուրդ մը կերտելու շատ յստակ տեսլականը կար, հիմնուելով երիտասարդութեան վրայ: 50-60-ական թուականներուն երիտասարդութեան մէջ եւս աշխուժ շարժում մը ստեղծուեցաւ, որ 70-ականներուն կարծէք թէ աւելի պահպանողական երանգ ստացաւ. լեզուն սկսաւ կտրուիլ ներկայէն եւ կառչեցաւ միայն անցեալին ու միայն հայկականին: Եւրոպայի կամ Հիւսիսային Ամերիկայի մէջ մշակութային նորարարութիւնը քիչ թէ շատ հող գտաւ, բայց հոն ալ դպրոցներու բացակայութեան պատճառով լեզուն չբարգաւաճեցաւ...:

«ՄՇԱԿՈՅԹԸ ՓՈՆԱՆՅԵԼԻՔ ԾՐԱՐ ՄԸ ՉԷ, ԿԵՐՏՈՒԵԼԻՔ ԸՆԹԱՅՔ ՄԸՆ Է»

Այսօր կարելի է միջոցներ հայթայթել, որպէսզի երիտասարդ սերունդը իր ձեւերով սփիւռքեան մշակոյթ մը ստեղծէ: Չեր հարցումին պատասխանը ասոր մէջն է. միջոցներ տրամադրել որ հայերէնով ստեղծագործութիւն տեղի ունենայ եւ ոչ թէ յաջորդ սերունդին ըսել, քարոզել կամ նոյնիսկ պարտադրել թէ իր մշակոյթը ի՞նչ պէտք է ըլլայ: Մշակոյթը փոխանցելիք ծրար մը չէ, կերտուելիք ընթացք մըն է:

Անշուշտ Սփիւռքը կղզիացուած չէ: Առնչութիւն ունի Օտարին հետ, եւ անպատճառ Հայաստանի հետ: Սակայն պէտք է ի մտի ունենալ, որ ամէն ինչին սկիզբը եւ վերջը Հայաստանը չէ, մանաւանդ 4-րդ, 5-րդ սերունդի Սփիւռքահայուն համար: Բայց թող սխալ չհասկցուի, Սփիւռքահայը անշուշտ որ իր կապը պիտի պահէ Հայաստանի հետ, ու անկէ ներշնչուի: Բայց միւս կողմէ Հայաստանն ալ առհասարակ մշակութային-ընկերային հողին վրայ պահպանողական կեցուածք մը ունի եւ այդ մարզերուն մէջ իբրեւ դուրսէն եկած գաղափարներ կը քննադատէ ամէն տեսակի նորարարութիւն (անշուշտ բացառութիւններ կան): Նորէն կրկնեմ, Սփիւռքը պէտք է ստանձնէ իր հարցերը լուծելու պատասխանատուութիւնը. ուրիշ խօսքով իր ապագան զրոյստելու ղեկավարութիւնը ստանձնէ: Ես լաւատես եմ, որովհետեւ երիտասարդութեան մէջ կը տեսնեմ արեւմտահայերէնը պաշտպանող եւ գործածող սերունդ մը, որ աշխուժացած է: Կիւլպէնկեան հիմնարկութիւնը անոր թիկունք կանգնելու եւ զայն քաջալերելու իր համեստ նեցուկը կը տրամադրէ:

«ՆՅ» - Պսակաձեւ ժափրը ձեւով մը առիթ ստեղծեց նման հարցեր համապարփակ ձեւով քննարկելու: Բայց տակաւին սկիզբն ենք եւ հաւանաբար մեր առօրեայ կենցաղին մէջ շատ բաներ պիտի փոխուին...:

Ռ.Փ. - Գիտէք, առցանց, հեռակապով ժողովները, հանդիպումները, դասախօսութիւնները հոյակապ առիթ կու տան բազմախօսակցութիւններու, որոնք կը դիտուին ու կ'ունենան շխարհի չորս ծագերը գտնուող հազարաւոր Հայերու կողմէ, առանց կազմակերպչական սահմանափակումներու: Նման առիթները պէտք է օգտագործենք՝ էական հարցերու շուրջ գաղափարներ փոխանակելու համար:

«ՆՅ» - Ամէն պարագայի, «Նոր Յառաջ» փորձեց հայերէնի դա-

սաւանդման եւ հայերէն լեզուի հետ առնչուած անհատական կամ հաստատութեանական տարբեր նախաձեռնութիւնները ցանկազրել ու տարածել, որպէսզի աւելի լայն շրջանակներու կողմէ փորձարկուին: Պէտք է ըսել, թէ բաւական հետաքրքրական անհատական նախաձեռնութիւններ գտանք գաւազան կայքէջերու վրայ: Անոնցմէ վերջինը Արցախի մէջ հաստատուած «Գրքասէր» կայքն է, որուն անդրադարձանք Մայիս 21-ի մեր ֆրանսերէն յանդիպումին մէջ: Հոն գետնտեղուած է արեւելահայերէն եւ արեւմտահայերէն ընթերցուած գրականութիւն: Օրինակ՝ արեւմտահայերէնով նշանաւոր հեղինակներէ շուրջ 70 ընթերցումներ կան՝ Անդրանիկ Ծառուկեան, Յակոբ Պարոնեան... , զորս կարելի է անվճար ունկնդրել...:

Ռ.Փ. - Այո՛, հայկական աշխարհին մէջ նման կայքէջեր գոյութիւն ունին: Որքան շատ, այդքան լաւ:

«ՆՅ» - Անդրադառնանք նաեւ միջազգային հասարակութիւնը յուզող էական խնդրի մը. «Google»-ի կամ «Microsoft»-ի նման մեծ ընկերութիւնները, որոնք հանդիպումները կազմակերպող ու տեղեկութիւնները փոխանակելու գլխաւոր հարթակներն են, անոնք են նաեւ գլխաւոր շահաւորները, եւ մենք ուզենք կամ չուզենք անոնց հսկայական միջոցներէն կախեալ ենք: Այս մարզէն ներս ալ նոր դերակատարներ կան, որոնք միջրօ-հարթակներ կը ստեղծեն, որոնք նաեւ տեղ մը կ'ապահովեն տեղեկութիւններու անվտանգութիւնը: Պէտք է մտածել այդպիսի հարթակներուն ուժ տալու, զանոնք քաջալերելու, անոնց նեցուկ կանգնելու մասին, որպէսզի կարելի ըլլայ ամբողջական ցանց մը ունենալով՝ այդ «մեծերէն» կախեալ չըլլալ: Այսպիսի կարելու նախաձեռնութիւն ստանձնած է Հայաստանի մէջ Իրական դպրոցի հովանաւոր Ինսթիտյութ ընկերութիւններու ցանցը:

Ռ.Փ. - Անշուշտ որ կարելիութեան սահմաններուն մէջ պէտք է քաջալերել նշեալ միջրօ-հարթակները, սակայն իրականութիւնը այն է, որ տեղ մը ստիպուած պէտք է անցնիլ այդ մեծ ցանցերէն: Կարելի է հարթակներ ստեղծել, որ օրինակ՝ միայն «Amazon»-էն կախեալ չըլլանք: Բայց հետազոտութեան պարագային քիչ մը դժուար է «Google»-էն անկախանալը: Կա գաղափար է: Պէտք է մտածել այդ մասին:

«ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԸ ՄԵՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ ՆԵՐԱՌԵԼՈՒ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ»

ՇՈՂԵՐ ՄԱՐԿՈՍԵԱՆ

(Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան Հայկական բաժանմունքին միացած է 2018-ին, կը գործակցի որպէս խորհրդատու եւ կարգ մը ծրագրերու պատասխանատու, մանաւանդ լեզուի եւ արհեստագիտութեան ծիրէն ներս)

«ՆՅ» - Պսակաձեւ ժափրի երեւան գալով Կիւլպէնկեան հիմնարկութիւնն ալ նոր ծրագրերով ասպարէզ իջաւ, նոր դուրս բացաւ լեզուի գործածութեան, երիտասարդութեան ներգրաւումին՝ համայնքային կեանքէն ներս, մտաւորական եւ արուեստագիտական ստեղծագործական ուժերը գործի լծելու նպատակով: Դիմողներ եղած են արդէն, արձագանգներ կան:

Շողեր Մարկոսեան - Կը հաւատանք որ լեզուն երբեք ալ ինքնանպատակ միջարկ մը չէ, այլ սերտօրէն կապուած է մտածումի կալուածին հետ. այսինքն լեզուի կենսունակութիւնը կ'ապահովուի նաեւ մտածողական աշխատանք մը խթանելով. ճիշդ այս է նպատակը «Խօսք առ» մրցանակին եւ կրթականի «Նորարար մշակոյթ» ծրագրին:

«Խօսք առ» մրցանակը կը վերաբերի համամարդկային հիմնահարցները մեր համայնքային կեանքին մէջ ներառելու կարելիութեան, առիթ տալով որ երիտասարդ,— եւ ինչու չէ նաեւ փորձառու,— միտքեր փոխանակեն, խորհրդակցին եւ արտայայտուին այս ուղղութեամբ: Համաճարակի պայմաններուն տակ ծնած այս մրցանակը եզակի է իր տեսակին մէջ, եւ շատ հետաքրքրական պիտի ըլլայ տեսնել թէ այս առաջին հարաւորութիւնը ինչպէ՞ս պիտի օգտագործուի, եւ թէ ի՞նչ պիտի ըլլայ աշխարհասփիւռ մեր համայնքներու արագ հակազդեցութիւնը, հաստատելով այս մրցանակին ընդմէջէն՝ Հայուն համարկու՞մը որպէս աշխարհի քաղաքացի, ըլլայ այդ Սփիւռքի կամ Հայաստանի մէջ:



(ՈՏ)

▶ կ'ուզեն: Վստահ ենք որ շատ լաւ ուսուցիչներ կան, որոնք չեն մասնակցած մրցանակին:

«ՆՅ» - Քիչ մը Լիբանանի մասին:

Գ.Մ. - Անցեալ տարուան ընթացքին մամուլի տարբեր հարթակներուն վրայ բազմիցս անդրադարձանք Լիբանանին ուղղուած մեր ռազմավարութեան մէջ տեղ գտած ծրագրերուն: Արագ յիշեցումի կարգով ըսեմ, որ ան բաղկացած է հինգ հիմնասիւներէ եւ յատուկ ծրագրեր ունի ուղղուած դպրոցներուն, ուսուցիչներուն, յատուկ կրթութեան, մանկավարժութիւն ուսանող աշակերտներուն եւ նորարար մշակոյթի խթանումին: Անցեալ տարուան Հոկտեմբերէն ի վեր, Լիբանանը անգամ մը եւս յայտնուած է անորոշութեան մէջ: Ժողովրդային ցոյցերուն պատճառաւ, դպրոցները քանի մը շաբաթ փակ մնացին, մինչ վրայ հասաւ պսակաձեւ ժահրի պարտագիր մեկուսացումը: Այսօր Լիբանանը կը գտնուի բաւական ծանր տնտեսական ճգնաժամի մը մէջ, որմէ անպակաս կը մնան հայկական գաղութի հաստատութիւնները:

Դպրոցներուն համար մշակուեցաւ նպաստի ծրագիր մը, որուն դիմեցին 13 դպրոցներ, իսկ անոնցմէ վեցը անցան երկրորդ փուլ: Ելլելով երկրին տագնապալից վիճակէն, նախապէս Մայիսին նշանակուած պայմանաժամը յետաձգեցինք երկու ամսով:

Լիբանանեան համալսարանի մը հետ կը ծրագրէինք նաեւ ուսուցիչներու վերատրակաւորումի դասընթացքներ, որոնք պիտի սկսէին 2020-2021 տարեշրջանի վերամուտին, սակայն նոյն մտահոգութիւններէն ելլելով, անոնք ալ յետաձգեցինք տարի մը:

Ներկայիս, Լիբանանի ամէնէն աշխուժ ծրագիրը «Նորարար մշակոյթի ծրագիր»-ն է, որ ուղղուած է 18-35 տարեկան երիտասարդներուն, որոնք կ'ուզեն արեւմտահայերէնով մտածուած իրենց ստեղծարար գաղափարները իրագործել: Կը շարունակենք դիմումներ ստանալ մինչեւ Յունիս 19, որմէ ետք անոնք պիտի արժեւորուին եւ գտնուին երկրորդ փուլին համար: Ծրագրած ենք 5000 ԱՄՆ տոլարի արժողութեամբ հինգ մրցանակ տալ, հինգ ծրագրերու:

Այս բոլորին հետ զուգահեռ եւ անշուշտ չնախատեսուած մեր ռազմավարութեան մէջ, 2020-ին Հիմնարկութիւնը երկու անգամ օժանդակութիւն զրկեց Լիբանան: Առաջինը՝ 170.000 ԱՄՆ տոլարի գումար մը, որ տարուան սկիզբը զրկուեցաւ Լիբանանի 18 գործող դպրոցներուն, իսկ անցեալ շաբթուան մէջ ալ 30.000 ԱՄՆ տոլարի մարդասիրական օգնութիւն զրկեցինք Լիբանանի մէջ ընկերային եւ բժշկական ծառայութիւններ մատուցող երեք կազմակերպութիւններու՝ Լիբանանահայ օգնութեան խաչին, Հայկական կրթական բարեսիրական միութեան եւ Հաուրրտ Գարակէօզեան հաստատութեան:

Ուրախ ենք նաեւ որ ուսուցիչներու առցանց դասաւանդումի մրցանակին շատերը կը մասնակցին Լիբանանէն եւ կը ստանան մրցանակներ: Անուղղակիօրէն այս մրցանակը նաեւ օգտակար կը դառնայ Լիբանանին:

«ՆՅ» - Հայերէնի առցանց ուսուցում գոյութիւն ունի: Եղած գործիքակազմը գոհացուցիչ է, թէ՛ ամէն ինչ սկիզբէն պէտք է յղանալ: Կը մրցակցի՞ ալ լեզուներու ուսուցողական մեթոտներուն հետ: Կը բաւարարէ՞ այսօրուան մանուկին, պատանիին, երիտասարդին պահանջները: Հարցումներ են որոնք բնականաբար կը գրգռեն մեր մտքերը:

Գ.Մ. - Ինչպէս դասարաններուն մէջ տեղի ունեցող, այնպէս ալ առցանց/հեռավար ուսուցումը միատարր երեւոյթ մը չէ: Սորվողներուն հետ առցանց հաղորդակցելու եւ գիտելիքներ, հմտութիւններ եւ նոյնիսկ արժէքներ փոխանցելու եւ գտնոնք այս ընթացքին հետ հաղորդակից դարձնելու հնարաւորութիւնները բազմազան են, իսկ հարթակները՝ գրեթէ անսահման:

Մէջ միայն հայերէնի, այլեւ դպրոցական բոլոր նիւթերուն համար ալ պսակաձեւ ժահրի պարտագրած ձեւաչափերը հեռու են իսկական առցանց ուսուցում համարուելէն: Ակամայ ստեղծուեցաւ ո՛չ միայն հանրային առողջապահութեան տագնապ, այլ նաեւ ուսումնական տագնապ: Հայկական վարժարանները մեծ մասամբ իրենք զիրենք գտան անյայտութեան առջեւ, իսկ հայերէնի կամ աւելի ճիշդ հայերէնով դասաւանդող ուսուցիչները, ա՛լ աւելի: Բոլորս ալ կը համաձայնինք որ մեր դպրոցներէն ներս հայերէնի ուսուցիչներուն միջին տարիքը չի գտնուիր երիտասարդութեան սահմաններուն մէջ եւ անոնցմէ քիչերն են որ ստացած են մանկավարժական ուսում կամ իրենց մասնագիտութեան արդիականացումներուն հետեւելու մէջ ունին շարունակական ներդրում: Հեռավար ուսուցումի մէջ ներառուող առցանց հարթակները ճկուն են, այսինքն՝ չեն սահմանափակուիր լեզուով մը: Ուրեմն, զանոնք գործածելը աւելի շատ արհեստագիտական հմտութիւն կ'ենթադրէ բայց անոնց համար նիւթեր պատրաստելը՝ շատ լուրջ եւ բժախնդիր մանկավարժական աշխատանք:

Պէտք է ըսել, որ առցանց ուսուցում չի նշանակեր նորարար կամ ժամանակակից ուսուցում, որովհետեւ համացանցը միայն կը ստեղծէ այլընտրանքային հարթակներ, բայց ոչ այլընտրանքային մտածողութիւն կամ մանկավարժական մօտեցումներ: Ուրեմն շատ դիւրին է աւանդական եւ արդէն ոչ արդիւնաւէտ մեթոտներուն աւելցնել աշխուժ գոյներ եւ շարժումներ եւ կարծել որ անոնք կը գոհացնեն մանկավարժական ժամանակակից չափանիշերը, կամ ալ մեր աշակերտներուն սորվելու հետաքրքրութիւնը:

Հայերէնի դասաւանդումին մէջ աշխարհով մէկ տարածուած մօտեցումը շատ դիւրին է բնորոշելը: Ուսուցիչէն դէպի աշակերտ ուղղուող դասախօսութիւններ (կամ քարոզներ), լեզուի կառուցին վրայ շեշտուած մօտեցում (քերականութեան դասաւանդումի գերակշռութիւն) եւ լեզուն ազգային պարունակէն դուրս շտեմնող բովանդակութեան փոխանցում: Այս բոլորը կը մղեն լեզուին կենսունակութեան վտանգումին եւ զայն միայն ազգային ինքնութիւնը ապահովող եւ ո՛չ անձի ինքնաբացայայտումին ուղղուած գործիք նկատելուն:

Չկայ այսօրուան մանուկ, երէկուան մանուկ. կայ միշտ ի ծնէ հետաքրքրուած եւ իր շրջապատը բացայայտելու մղումով օժտուած մանուկ, որուն նախատրամադրութիւնները շրջապատին կողմէն կամ կը քաջալերուին, կամ ալ կը խեղդուին: Հայերէնի ուսուցումը բնականաբար կաշկանդուած է եւ իր հերթին կը կաշկանդէ զայն սորվողները:

Հիմնարկութեան վերջին տարիներու բազմազան նախաձեռնութիւնները կը միտին լեզուին եւ զայն սորվողներուն միջեւ գոյացած ոչ շատ բարենպաստ միջավայրը փոխելու, հայերէնը որպէս աշխարհին բացուելու լեզու որդեգրելու եւ անկէ մեկնելով ապահովելու անոր ոչ միայն պահպանումը, այլ նաեւ զարգացումը:

«ՆՅ» - Նոյն հարցումը՝ նաեւ ձեզի: Աշխարհը արագընթաց կ'ընթանայ դէպի թուայնացում, տեղեկատուական արհեստագիտականացում: Այս ընթացքը կը պահաջէ Գերդրումներ: Հայութիւնը միջոցները ունի՞ դիմագրաւելու նման մարտահրաւէր: Ի՞նչ է ասոր յաջողութեան երաշխիքը:

Գ.Մ. - Հայերէնը, մանաւանդ արեւմտահայերէնը չունի անգլերէնին, ֆրանսերէնին կամ այլ տարածուած լեզուներուն տրամադրած որակաւոր եւ վստահելի նիւթերու առատութիւնը: Դիւրին չէ սովորական որոնում մը կատարելով գտնել նիւթին, տարիքին եւ դասին նպատակակէտերուն պատշաճող հայերէնով նիւթեր: Ուրեմն այս պայմաններուն մէջ, հայերէնի ուսուցիչը, ո՛չ միայն իր արհեստագիտական հմտութիւնները պէտք էր զարգացնէր շատ արագ ձեւով, այլ նաեւ՝ այդ հարթակներուն վրայ աշխատելու համար, իր գործին համապատասխան գործիքները պէտք էր ստեղծէր:

ԶԱՐՅԱՆՅ 2.0. «ՄԱՄՆԱԿԻՅՆԵՐՐ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀԻ, ՀԵՌՈՒԷՆ ՊԻՏԻ ՄՕՏԵՆԱՆՔ»

ԱՆԻ ԿԱՐՄԻՐԵԱՆ

(Գալուստ Կիլպէնկեան հիմնարկութեան Հայկական համայնքներու բաժանմունքի արեւմտահայերէնի տարածման աշխատանքի պատասխանատու)

«Նոր Յառաջ» - Զարմանազանի ընդհանուր ծրագրին մէջ Գերառուած էր նաեւ ուսուցիչներու վերապատրաստութեան յայտագիրը, համագործակցութեամբ՝ Փարիզի Արեւելեան լեզուներու եւ քաղաքակրթութիւններու Ազգային հիմնարկին (Ինստիտուտ) (Ինստիտուտ): Ի վերջոյ անցնող երեք տարիներու ընթացքին մանկավարժական եւ Գործարար արհեստագիտութեան մեթոտներով անոնք որոշ հմտութիւններ ձեռք ձգեցին: Այսօրուան համաճարակի ստեղծած պայմաններուն մէջ, այդ ծրագրին մասնակցած ուսուցիչները որքանով յաջողեցան կիրառել իրենց փորձառութիւնը հեռակայ դասաւանդութեան ժամանակ:



Անի Կարմիրեան - Նախորդ տարիներուն՝ Զարմանազանի յայտագրի ընթացքին շեշտը մասնաւորապէս հեռակայ դասաւանդութեան վրայ չէր դրուած եւ ամէն պարագայի միշտ չէ որ նորարար արհեստագիտութիւնը կը զուգահեռի նորարար մանկավարժութեան հետ: Բայց այս փոփոխութիւններու գծով ուսուցիչներէն բազմաթիւ արձագանգներ ստացանք: Համաճարակի պատճառով ստեղծուած կացութիւնը անսպասելի էր բո-

